ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 10 – Ա **05 հունվարի 2022 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2110-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի և 3-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Միացման ձևով «Գավառի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու, այն՝ «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու գործընթացը կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Վարդանյան Լուսինե	- Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, նախագահ
Ղուկասյան Վերգինե	- Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության պետ
Հովհաննիսյան Բուրմունք	- Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ- գլխավոր իրավաբանի պարտականությունները ժամանակավորապես կատարող
Սարգսյան Նելսոն	- Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ- գլխավոր հաշվապահ

Բիձյան Հակոբջան - Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ

2. Հանձնաժողովին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2110-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպել միացման ձևով «Գավառի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու, այն՝ «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու գործընթացը.
2) աշխատանքներն իրականացնելու ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին.
3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2110-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում նույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

05.01.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN:3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք.Գավառ